Արհեստակցական կազմակերպության պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	**«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք**	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի**
Արհեստակցական կազմակերպություն	Արհեստակցական կազմակերպության պետական գրանցումը և պետական գրանցման մերժումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: (10-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)	Արհեստակցական կազմակերպության պետական գրանցումը մերժելու հիմքերն են՝ **1.** արհեստակցական կազմակերպության կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը. *(մասնավորապես՝* ***«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն.*** *Արհեստակցական կազմակերպությունը հիմնադրվում է նրա հիմնադիրների (առնվազն երեք աշխատողի) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ:* *Հիմնադիր ժողովը հաստատում է կազմակերպության կանոնադրությունը, ընտրում է ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ:* ***(4-րդ հոդված)*** **2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը. **3.** ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ արհեստակցական կազմակերպության ներկայացրած այլ փաստաթղթերին. *(մասնավորապես՝* *Արձանագրությունը պետք է բովանդակի տեղեկություններ՝* *1) նիստի գումարման օրվան վայրի մասին.* *2) Արձանագրության կազմման օրվամասին.* *3) նիստի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ ձայնի իրավունք ունեցողների) մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձևուն ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).* *4) նիստի աշխատանքներին մասնակցած անձանց մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձևուն ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).* *5) նիստի օրակարգը.* *6) քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները.* *7) այլ տեղեկություններ, եթե այդպիսի պահանջ սահմանված է առանձին կազմակերպական-իրավական ձևուն ունեցող*

		իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով, այլ օրենքներով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:): (17-րդ հոդվածի 6-րդ մաս) **4.** անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում: (36-րդ հոդված 1-ին մաս) *(մասնավորապես՝* *1) ոչ առևտրային կազմակերպության անվանման գրանցումը իրականացվում է կազմակերպության գրանցման հետ միաժամանակ: (32.1 հոդվածի 1-ին մաս)* *2) Կազմակերպության անվանման գրանցումը մերժվում է, եթե դրա տարբերակող նշանակությունն ունեցող անունը՝* *ա) նույնական է սահմանված կարգով գրանցված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը.* *բ) նույնական է Կազմակերպության գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը (անվանման հապավմանը).* *գ) պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին: (32.1 հոդվածի 6-րդ մաս)*

Արհեստակցական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	**«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք**	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի**
Արհեստակցական կազմակերպություն	Արհեստակցական կազմակերպության պետական գրանցումը և պետական գրանցման մերժումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: (10-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)	Արհեստակցական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմքերն են՝ **1.** արհեստակցական կազմակերպության փոփոխությունների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը. **2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ արհեստակցական կազմակերպության ներկայացրած այլ փաստաթղթերին. *(մասնավորապես՝ Արձանագրությունը պետք է բովանդակի տեղեկություններ՝ 1) նիստի գումարման օրվա և վայրի մասին. 2) Արձանագրության կազմման օրվա մասին. 3) նիստի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ ձայնի իրավունք ունեցողների) մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձևի ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ). 4) նիստի աշխատանքներին մասնակցած անձանց մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձևի ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ). 5) նիստի օրակարգը. 6) քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները. 7) այլ տեղեկություններ, եթե այդպիսի պահանջ սահմանված է առանձին կազմակերպական-իրավական ձևի ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով, այլ օրենքներով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:): (17-րդ հոդվածի 6-րդ մաս):* **3.** առկա է արհեստակցական կազմակերպության փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ: (43-րդ հոդվածի)